ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ

ԳՆՈՒՄՆԵՐԻ ՀԵՏ ԿԱՊՎԱԾ ԲՈՂՈՔՆԵՐ ՔՆՆՈՂ ԱՆՁ

ք. Երևան 16.07.2019թ.

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ
ՀՀ ԳՆՈՒՄՆԵՐԻ ՀԵՏ ԿԱՊՎԱԾ ԲՈՂՈՔՆԵՐ ՔՆՆՈՂ ԱՆՁԻ
թիվ ԳԲՔԱ-LO-2019/46

Նախագահությամբ՝ ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձ Լ. Օհանյանի
Քարտուղարությամբ՝ Ռ. Մկրտչյանի

Մասնակցությամբ՝
Բողոքաբեր՝ «Սավ Գրուպ» ՍՊԸ-ի ներկայացուցիչ՝ Մ. Երիցյանի,

ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձը (այսուհետ՝ նաև Բողոքներ քննող անձ)՝ քննության առնելով «Սավ Գրուպ» ՍՊԸ-ի (այսուհետ՝ նաև Ընկերություն) կողմից 26.06.2019թ. ներկայացրած բողոքը (այսուհետ՝ նաև Բողոք) և կից փաստաթղթերը,

Պ Ա Ր Զ Ե Ց

1. <u>Գործի նախապատմությունը</u>

Դիմելով ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձին՝ Ընկերությունը ներկայացրած բողոքով խնդրել է՝ պարտավորեցնել պատվիրատուին հնարավորություն տալ «Սավ Գրուպ» ՍՊԸ-ին շտկելու փաստաթղթերը:

Բողոքը Բողոքներ քննող անձին է մակագրվել 26.06.2019թ.-ին և 27.06.2019թ.-ի որոշմամբ բողոքը ընդունվել է վարույթ և 09.07.2019թ.-ին նշանակվել է նիստ:

Բողոքի քննությունն ավարտվել է 09.07.2019թ.-ին և Բողոքներ քննող անձի որոշման հրապարակման օր է նշանակվել 16.07.2019թ.-ին:

2. «Սավ Գրուպ» ՍՊԸ-ի ներկայացրած փաստերը, հիմնավորումները և պահանջը.

«Սավ Գրուպ» ՍՊԸ-ն ներկայացրած բողոքով հայտնել է հետևյալը.

«Հայանում եմ Ձեզ այն մասին, որ մեր կազմակերպությանը՝ «ՍԱՎ ԴՐՈՒՊ» ՍՊԸ-ն մասնակցել է «ՆՈՐՔ» ինֆեկցիոն կլինիկական հիվանդանոց ՓԲԸ-ի կողմից հայտարարված Բժշկական պարագաների ՆԻԿՀ-ԳՀԱՊՁԲ-19/5 ծածկագրով մրցույթին և ներկայացրել է անհրաժեշտ փաստաթղթերը:

Բանավոր կերպով տեղեկացել եմ այն մասին, որ ներկայացված գնային առաջարկի 1, 2, 8 շափաթաժինները մեր կազմակերպության կողմից ներկայացված է մինիմալ գներով, որը մերժվել է, պատճառաբանվել է, որ փաստաթղթերը ստորագրված է եղել այլ անձի կողմից, և շտկման հնարավորություն չի տրվել, այսինքն խախտվել է Գնումների գործընթացի 48-րդ կետը:

Հարկ եմ համարում նշել նաև, որ մեր կազմակերպության կողմից ներկայացված փաստաթղթերը ստորագրված է եղել լիազորված անձի կողմից (լիազորագիր թիվ 033, 28.03.2019թ. ուժի մեջ է 31.12.2019թ.):

Բայց հիմնվելով Պետության և ինչպես նաև մեր կազմակերպության շահերից, խնդրում եմ Գնումների մասին ՀՀ Օրենքի 50-րդ հոդվածի պարտավորեցնել պատվիրատուին հնարավորություն տալ շտկել փաստաթղթերը: Ի դեպ հնարավորություն է արվել մասնակից այլ կազմակերպություններին, որը երևում է կից փաստաթղթերում:»:

Ելնելով վերոգրյալից Բողոքներ քննող անձին խնդրել են՝ պարտավորեցնել պատվիրատուին հնարավորություն տալ «Սավ Գրուպ» ՍՊԸ-ին շտկելու փաստաթղթերը:

3. «Նորք» ինֆեկցիոն կլինիկական հիվանդանոց ՓԲԸ-ի կողմից բողոքի վերաբերյալ ներկայացված փաստարկները, հիմնավորումները և դիրքորոշումը.

Բողոքներ քննող անձը 27.06.2019թ. գրությամբ դիմել է «Նորք» ինֆեկցիոն կլինիկական հիվանդանոց ՓԲԸ-ին՝ հնարավորություն տալով «Սավ Գրուպ» ՍՊԸ-ի կողմից

26.06.2019թ. ներկայացված բողոքի վերաբերյալ ներկայացնել Պատվիրատուի գրավոր կարծիքը:

Պատվիրատուն 15.07.2019թ.-ին ներկայացված դիրքորոշմամբ հայտնել է հետևյալը.

«Տեղեկացնում ենք, որ 2019թ.-ի հունիսի 12-ին տեղի է ունեցել ՆԻԿՀ-ԳՀԱՊՁԲ-19/5 ծածկագրով էլեկտրոնային գնումների Armeps (www.armeps.am) համակարգի միջոցով գնանշման հարցման ընթացակարգի հայտերի բացումը, որին հայտ է ներկայացրել նաև ՍԱՎ ԳՐՈՒՊ ՍՊԸ-ն:

Նշված մասնակցի հայտում հրավերով սահմանված փաստաթղթերը առկա են եղել, սակայն փաստաթղթերում նշված էր մենեջերի անուն ազգանունը Սմբատ Ղուշչյան:

Ստորագրված էր մեկ այլ անձի կողմից Արմեն Հարությունյանի և Armeps (www.armeps.am) համակարգում կցված չի եղել ոչ մի լիազորագիր:

Հիմք ընդունելով վերոգրյալը և ՀՀ կառավարության 04.05.2017թ. թիվ 526-Ն որոշմամբ հաստատված գնումների գործընթացի կազմակերպման մասին կարգի 40-րդ կետի 4-րդ ենթակետը գնահատող հանձնաժողովը որոշել է մերժել ՍԱՎ ԳՐՈՒՊ ՍՊԸ-ի ներկայացրած հայտը:»:

4. <u>ԳԲՔԱ-ԼՕ-2019/46 բողոքի քննության համար էական նշանակություն ունեցող փաստերը.</u>

Սույն գործի փաստերի համաձայն՝

«Նորք» ինֆեկցիոն կլինիկական հիվանդանոց ՓԲԸ-ի կողմից «բժշկական պարագաների» ձեռքբերման նպատակով հայտարարվել է «ՆԻԿՀ-ԳՀԱՊՁԲ-19/5» ծածկագրով գնանշման հարցման ընթացակարգ (այսուհետև՝ Ընթացակարգ):

Ընթացակարգին մասնակցության հայտ է ներկայացրել նաև «Սավ Գրուպ» ՍՊԸ-ն:

Ընկերության կողմից ներկայացված թիվ 1 հավելվածով «գնանշման հարցմանը մասնակցելու դիմում-հայտարարություն» և թիվ 2 հավելվածով «գնային առաջարկ» փաստաթղթերում որպես ղեկավարի պաշտոն, անուն ազգանուն նշվել է՝ «Սմբատ Ղուշչյան» անունը, իսկ վերը նշված փաստաթղթերը ստորագրվել է «Արմեն Հարությունյան»-ի կողմից:

Ընթացակարգի գնահատող հանձնաժողովի (այսուհետև՝ նաև Հանձնաժողով) 12.06.2019թ. կայացած նիստի թիվ 2 արձանագրության համաձայն՝ «Սավ Գրուպ» ՍՊԸ-ի կողմից ներկայացված հայտում ներառված փաստաթղթերում բացակայում է ընկերության տնօրենի ազգանունը և էլեկտրոնային ստորագրությունը:

Նույն արձանագրության համաձայն՝ Հանձնաժողովը ղեկավարվելով ՀՀ կառավարության 04.05.2017թ. թիվ 526-Ն որոշմամբ հաստատված գնումների գործընթացի կազմակերպման մասին կարգի 40-րդ կետի 4-րդ ենթակետով, որոշել է մերժել «Սավ Գրուպ» ՍՊԸ-ի կողմից ներկայացված հայտը:

5. <u>Բողոքներ քննող անձի հիմնավորումները և եզրահանգումը</u>.

Բողոքներ քննող անձը լրիվ, օբյեկտիվ և բազմակողմանի հետազոտելով և գնահատելով սույն գործում առկա ապացույցները, համադրելով դրանք գործով պարզված փաստական հանգամանքների հետ, հանգում է այն եզրակցությանը, որ «Սավ Գրուպ» ՍՊԸ-ի կողմից 26.06.2019թ.-ին ներկայացված բողոքն ենթակա է բավարարման, հետևյալ պատճառաբանությամբ.

Այսպես՝

ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 321-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ լիազորագիր է համարվում գրավոր լիազորությունը, որն անձը տալիս է այլ անձի՝ երրորդ անձանց առջև ներկայացվելու համար: Ներկայացվողը ներկայացուցչի կողմից գործարքներ կնքելու համար գրավոր լիազորություն կարող է անմիջականորեն տալ համապատասխան երրորդ անձին:

Նույն հոդվածի 5-րդ կետի համաձայն՝ իրավաբանական անձի անունից լիազորագիրը տրվում է նրա ղեկավարի կամ դրա համար նրա կանոնադրությամբ լիազորված մեկ այլ անձի ստորագրությամբ:

«Գնումների մասին» ՀՀ օրենքի (այսուհետ նաև՝ Օրենք) 30-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ մասնակիցը չի կարող նույն ընթացակարգին ներկայացնել մեկից ավելի հայտ: Մասնակիցը հայտը ներկայացնում է հրավերով սահմանված կարգով: Հայտը ներառում է մասնակցի հաստատած՝

1) հրավերի պահանջներին իր տվյալների համապատասխանության մասին հայտարարությունը.

2) գնային առաջարկը.

3) ոչ գնային առաջարկը (տեխնիկական առաջարկ կամ տեխնիկական բնութագիր), եթե հրավերով նախատեսված է.

4) հրավերով նախատեսված այլ փաստաթղթեր (տեղեկություններ):

Նույն հոդվածի 2-րդ մասի համաձայն՝ … հրավերով նախատեսված՝ մասնակցի կազմած փաստաթղթերն ստորագրում է դրանք ներկայացնող անձը կամ վերջինիս

լիազորած անձը (այսուհետ՝ գործակալ): Եթե հայտը ներկայացնում է գործակալը, ապա հայտով ներկայացվում է վերջինիս այդ լիազորությունը վերապահված լինելու մասին փաստաթուղթ:

Ընթացակարգի հրավերի 2-րդ մասի 3.2 կետի համաձայն՝ սույն հրավերով նախատեսված՝ մասնակցի կազմած փաստաթղթերը ստորագրում է դրանք ներկայացնող անձը կամ վերջինիս լիազորված անձը (այսուհետ՝ գործակալ): Եթե հայտը ներկայացնում է գործակալը, ապա հայտով ներկայացվում է վերջինիս այդ լիազորությունը վերապահված լինելու մասին փաստաթուղթ:

Վերոնշյալ իրավական նորմերի վերլուծության արդյունքում, Բողոքներ քննող անձը, փաստում է, որ հայտը ստորագրելու լիազորությունը հաստատող փաստաթուղթը՝ լիազորագիրը, հանդիսանում է հայտում ներառվող փաստաթուղթ, որը ներկայացվում է հայտը ստորագրելու պատշաճ լիազորությունը հավաստելու համար:

ՀՀ կառավարության 04.05.2017թ. թիվ 526-Ն որոշմամբ հաստատված «Գնումների գործընթացի կազմակերպման» կարգի (այսուհետ նաև՝ Կարգ) 40-րդ կետի 4-րդ ենթակետի համաձայն՝ հայտերի բացման նիստում հանձնաժողովը մերժում է այն հայտերը, որոնցում բացակայում են գնային առաջարկը և (կամ) հայտի ապահովումը կամ եթե դրանք ներկայացված են հրավերի պահանջներին անհամապատասխան:

Կարգի 41-րդ կետի համաձայն՝ եթե հայտերի բացման նիստի ընթացքում իրականացված գնահատման արդյունքում մասնակցի հայտում արձանագրվում են անհամապատասխանություններ՝ հրավերի պահանջների նկատմամբ, բացառությամբ այն դեպքերի, երբ հայտում բացակայում է գնային առաջարկը կամ հայտի ապահովումը, կամ գնային առաջարկը, կամ հայտի ապահովումը ներկայացված է հրավերի պահանջներին անհամապատասխան, ապա հանձնաժողովը մեկ աշխատանքային օրով կասեցնում է նիստը, իսկ հանձնաժողովի քարտուղարը նույն օրը դրա մասին էլեկտրոնային եղանակով տեղեկացնում է մասնակցին՝ առաջարկելով մինչև կասեցման ժամկետի ավարտը շտկել անհամապատասխանությունը:

Վերոգրյալ իրավակարգավորումների լույսի ներքո, Բողոքներ քննող անձը փաստում է, որ Կարգի 41-րդ կետը ուղղակիորեն սահմանում է արձանագրված անհամապատասխանությունը շտկելու անթույլատրելիություն հայտում ներառվող միայն երկու փաստաթղթի համար՝ գնային առաջարկը և հայտի ապահովումը: Սույն կետի իմաստից բխում է, որ մնացած բոլոր դեպքերում հայտում ներառվող փաստաթղթերում արձանագրված անհամապատասխանություններն ենթակա են շտկման:

Սույն գործի փաստերի հիման վրա, Բողոքներ քննող անձն արձանագրում է, որ «Նորք» ինֆեկցիոն կլինիկական հիվանդանոց ՓԲԸ-ի կողմից «բժշկական պարագաների» ձեռքբերման նպատակով հայտարարված «ՆԻԿՀ-ԳՀԱՊՁԲ-19/5» ծածկագրով գնանշման հարցման ընթացակարգին մասնակցության հայտ ներկայացրած «Սավ Գրուպ» ՍՊԸ-ի կողմից ներկայացված թիվ 1 հավելվածով «գնանշման հարցմանը մասնակցելու դիմում-հայտարարություն» և թիվ 2 հավելվածով «գնային առաջարկ» որպես ղեկավարի պաշտոն, անուն ազգանուն նշվել է՝ Սմբատ Ղուշչյանի անունը, իսկ վերը նշված փաստաթղթերը ստորագրվել է Արմեն Հարությունյանի կողմից:

Ընթացակարգի գնահատող հանձնաժողովը ղեկավարվելով ՀՀ կառավարության 04.05.2017թ. թիվ 526-Ն որոշմամբ հաստատված գնումների գործընթացի կազմակերպման մասին կարգի 40-րդ կետի 4-րդ ենթակետով, որոշել է մերժել «Սավ Գրուպ» ՍՊԸ-ի կողմից ներկայցված հայտը, քանի որ Ընկերության կողմից ներկայացված հայտում ներառված փաստաթղթերում բացակայում է ընկերության տնօրենի ազգանունը և էլեկտրոնային ստորագրությունը:

Այսպիսով, հաշվի առնելով այն հանգամանքը, որ լիազորագիրը վերոհիշյալ նորմերի համաձայն, հանդիսանում է հայտով ներկայացվող փաստաթուղթ և չի հանդիսանում գնային առաջարկ կամ հայտի ապահովում, ուստի դրանում անհամապատասխանություն արձանագրվելու դեպքում կիրառելի է Կարգի 41-րդ կետով նախատեսված շտկելու հնարավորությունը:

Զարգացնելով վերը նշված վերլուծությունը, Բողոքներ քննող անձը փաստում է նաև, որ այն դեպքերում, երբ առկա է տնօրենի անուն, ազգանվան և էլեկտրոնային ստորագրության փոխարեն այլ անձի անուն, ազգանուն և/կամ ստորագրություն, սակայն հայտին կցված չէ լիազորագիր, ապա այս դեպքում ևս կիրառելի է Կարգի 41-րդ կետով նախատեսված շտկելու հնարավորությունը:

Ուստի, տվյալ դեպքում, ընկերության տնօրենի անուն, ազգանվան և էլեկտրոնային ստորագրության փոխարեն այլ անձի անուն, ազգանուն և/կամ ստորագրություն լինելու հանգամանքը ոչ մի կերպ չի կարող գնահատվել որպես գնային առաջարկին վերագրվող անհամապատասխանություն, ավելին՝ որևէ իրավական հիմք առկա չէ այդ փաստով գնային առաջարկն անհամապատասխան գնահատելու համար:

Այսպիսով, վերոհիշյալ փաստական հանգամանքների և իրավական նորմերի լույսի ներքո, դրանց համակարգված վերլուծության արդյունքում, Բողոքներ քննող անձը հանգում է այն եզրակացության, որ գնահատող հանձնաժողովի կողմից «Սավ Գրուպ» ՍՊԸ-ի հայտը

մերժելու մասին որոշումն իրավաչափ չէ և չի բխում գնումների մասին ՀՀ օրենսդրությամբ սահմանված պահանջներից:

Ելնելով վերոգրյալից՝ ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձը

Ո Ր Ո Շ Ե Ց

«Սավ Գրուպ» ՍՊԸ-ի կողմից 26.06.2019թ. ներկայացրած բողոքը բավարարել:

Պարտավորեցնել «ՆԻԿՀ-ԳՀԱՊՁԲ-19/5» ծածկագրով գնանշման հարցման ընթացակարգի գնահատող հանձնաժողովին դադարեցնել «Սավ Գրուպ» ՍՊԸ-ի հայտը մերժելու մասին որոշումը:

ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձի ընդունած որոշումն ուժի մեջ է մտնում այն տեղեկագրում հրապարակելուն հաջորդող օրը:

ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձի ընդունած որոշումն իրավապարտադիր է, որը կարող է փոփոխվել կամ վերացվել, այդ թվում՝ մասնակի, միայն դատարանի կողմից:

ՀՀ գնումների հետ կապված
բողոքներ քննող անձ՝ **ԼԵՎՈՆ ՕՀԱՆՅԱՆ**